

ՆԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ

111

ՀՀ ՍՓՅՈՒՐՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

Տնտեսություն

Լիբանանի նախագահը Ռաֆ Յիրիկյանին շնորհել է «Լիբանանի Հանրապետության Նախագահական գրահ» շքանշանը

Քաղաքականություն

ԱՀՀ-ն սատարում է Ֆրենկ Փալոունի Լեռնային Ղարաբաղին 10 մլն դոլար հատկացնելու վերաբերյալ առաջարկին

Մասաչուսեթսի Պալատի խոսնակ. Չի կարելի թույլ տալ, որպեսզի աշխարհը մոռանա Հայոց ցեղասպանության մասին

Բարբարա Բոքսերը Բարաք Օբամային կոչ է արել շտկել իր սխալները և ճանաչել Հայոց ցեղասպանությունը

Ադամ Շիֆը մասնակցեց ԱՄՆ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության գոհերի հիշատակմանը

ԱՀՀ-ն կոչ է անում ԱՄՆ բոլոր կոնգրեսականներին աջակցել Հայոց ցեղասպանության ճանաչմանը

ՀՀ սփյուռքի նախարարություն

«Առավոտ». Սփյուռքի նախարարը հայրենանվեր գործ կանի, եթե «Մեկ ազգ, մեկ մշակույթ» նախագիծը փակի

Փոխադարձ շնորհավորանքներ և փոխշահավետ համագործակցություն

Ազգայինի և համամարդկայինի ներդաշնակ զարգացում

ՀՀ սփյուռքի նախարարությունում կազմակերպվեց տեսակոնֆերանս «Մոսկվայի հայ երիտասարդների ասոցիացիայի» անդամների մասնակցությամբ

Հրանուշ Հակոբյանն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպան Թենգիզ Շարմանաշվիլիին

Հրանուշ Հակոբյան. Եթե լրատվամիջոցները 4-րդ իշխանությունն են, ապա բլոգերները 5-րդ իշխանությունն են

«Կտոր մը Հայրենիք». մրցույթը մեկնարկել է

Քննարկվեցին Ռուսաստանի հայ համայնքի կրթական հիմնախնդիրներին առնչվող հարցեր

Սփյուռք

ԱԲԽԱԶԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ԱՇԽԱՏՈՒՄ Է ԲԱՐՁՐԱՑՆԵԼ
ԱՅՆՏԵՂ ԳՈՐԾՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ
ՄԱԿԱՐԴԱԿԸ

ԵՎՐԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ-2011

Կալիֆորնիայի հայերը ցույց են անցկացնելու նախագահ Օրամայի
դեմ

Ապրիլի 18-24-ը Կալիֆորնիայում կնշվի որպես Հայոց
ցեղասպանության զոհերի շաբաթ

Վրաստանի Ռուսթավի քաղաքում գործող «Սուրբ Պարթև»
կիրակնօրյա դպրոցում կրթությունը դարձել է երկամյա

ԱԽԱԼՑԽԱՅՈՒՄ ՆՇՎԵՑ ՀԱՅ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ՎԱՀՐԱՄ
ԳԱՅՑԵՉՅԱՆԻ 132-ԱՄՅԱԿԸ

Կլենտելլի Մեջ Նշուեցաւ «Ալիք» Օրաթերթի 80ամեակը

ANCA-ն միանում է ապրիլի 24-ն Աղոթքի օր հայտարարելու՝ հայ
կրոնական առաջնորդների կոչին

Ուկրաինայի հայ երիտասարդները կոչ են անում Վիկտոր
Յանուկովիչին ճանաչել Հայոց ցեղասպանությունը

Քորուլեթիում կգործի հայկական կիրակնօրյա դպրոց

ANCA-ն Դավանանքի պաշտպանության համաժողովի
ուշադրությունն է հրավիրել Թուրքիայում քրիստոնյաների վիճակի
վրա

ԱՄՆ հայ համայնքն այլևս չի խաբվի նախագահի թեկնածուի կեղծ
խոստումներին

Նիժնի Նովգորոդի հայ համայնքի ջանքերով քաղաքում հայկական
եկեղեցի է կառուցվում

Իսպանիայի Հայ Դատի հանձնախումբը ողջունում է Արգենտինայի
դատարանի որոշումը Հայոց ցեղասպանության մասին

Հայ համայնքի ձայնը 70-միլիոնանոց Թուրքիայում հազիվ թե
կարողանա ազդել քննությունների արդյունքների վրա

Ապրիլի 19-ին Հաագայում տեղի կունենա ոգեկոչման համերգ՝
նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին

ԱՄՆ-ում կկայանա պրոֆեսոր Շեմայանի «Հայ փախստականները
Պորտ Սաիդում, Եգիպտոս 1915թ.» դասախոսությունը

Երուսաղեմում տեղի կունենա սիմպոզիում Հայոց ցեղասպանության թեմայով

[Հասարակություն](#)

Մասաչուսեթսի նահանգապետ Ռեյալ Պատրիկը հայտարարվել է 2011 թ. «Հայերի քարեկամ»

[Մշակույթ](#)

2011-ի ընթացքում Հունաստանում տեղի կունենան միջոցառումներ՝ նվիրված Վիլյամ Սարոյանին

Ապրիլի 13-ին Հռոմում տեղի կունենա Շառլ Ազնավուրի համերգը Կալիֆորնիայի հայ գրողները կհարգեն Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը

Ապրիլի 16-ին Կրեմլի պալատում կանցնի Armenia Music Awards 2011 մրցանակաբաշխությունը

[Սպորտ](#)

Ապրիլի 24-ին Ստամբուլում հայ ձյուդոիստները կպաշտպանեն իրենց երկրի պատիվը

Վիկ Դարչինյան. Ապրիլի 24-ին ողջ իմ թիմը հարգելու է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը

ATP ապրիլյան վարկանիշում Դավիթ Նալբանդյանը շարունակում է 1585 միավորով զբաղեցնել 19-րդ տեղը

[Հայտարարություններ](#)

«Հայապահպանության գործում ունեցած նշանակալի ավանդի համար» համահայկական ամենամյա մրցանակաբաշխություն

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ



Տնտեսություն

Լիբանանի նախագահը Ռալֆ Յիրիկյանին շնորհել է «Լիբանանի Հանրապետության Նախագահական գրահ» շքանշանը

2011-04-11

Այս շքանշանը Ռալֆ Յիրիկյանին շնորհվել է Հայաստանում լիբանանյան համայնքին մատուցած ծառայությունների, գործարարության ու գործարար կառավարման բնագավառներում արձանագրած հաջողությունների, նոր մշակույթ ներդնելու և զարգացնելու գործում ունեցած նշանակալի ավանդի, Լիբանան-Հայաստան բարեկամական հարաբերությունների ամրապնդման գործին բերած մասնակցության համար, հայտնում է ընկերության մամլո ծառայությունը:



Քաղաքականություն

ԱՀՀ-ն սատարում է Ֆրենկ Փալոունի Լեռնային Ղարաբաղին 10 մլն դոլար հատկացնելու վերաբերյալ առաջարկին

2011-04-16

Փալոունը նշել է, որ մտադիր է մոտ 60 մլն դոլար խնդրել Հայաստանի և 10 մլն դոլար Լեռնային Ղարաբաղի համար, ինչպես նաև 8 մլն դոլար պաշտպանության ուղորտի և 2 մլն դոլար զինվորականների միջազգային կրթական թրենինգների համար: «ԱՀՀ-ն ողջունում է Փալոունի հայտարարությունը: Մենք հուսով ենք, որ կաշխատենք կոմիտեի անդամների համար՝ Հայաստանին ու Արցախին օգնելու համար: Հաշվի առնելով Ադրբեջանի ռազմատենչ հայտարարությունները և դիպուկահարների դպրոցի բացումը՝ մենք կոչ ենք անում Կոնգրեսին լիարժեք օգտագործել «Ազատության ակտի» 907-րդ ուղղումը Ադրբեջանին ԱՄՆ կառավարական օգնությունից զրկելու մասին», -ասել է Քաղյան-Դոդովը:

Նա նաև կոմիտեի ուշադրությունն է հրավիրել քրիստոնյա փոքրամասնությունների վիճակին Մերձավոր Արևելքում, որոնք ապրում են «ռազմական պայմաններում ու ճնշման տակ»: ԱՀՀ-ն նաև կարևորում է Թուրքիայի կողմից հնչող սպառնալիքները՝ թուրքաբնակ 100 հազար հայերին վտարելու մասին:

«Մենք կոչ ենք անում Օբամային, որպեսզի նա ապրիլի 24-ի իր ամենամյա ուղերձում Մեծ եղեռն հայերեն արտահայտությունը փոխարինի անզլերեն՝ Հայոց ցեղասպանություն եզրույթով», -ասվում է ԱՀՀ հայտարարության մեջ:



Մասաչուսեթսի Պալատի խոսնակ. Չի կարելի թույլ տալ, որպեսզի աշխարհը մոռանա Հայոց ցեղասպանության մասին

2011-04-16

«Մենք չպետք է թույլ տանք, որպեսզի աշխարհը մոռանա այդ ոճրագործության մասին: Դա չափազանց կարևոր է և մենք հարգում ենք Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը», -ասել է Պալատի խոսնակ Ռոբերտ Դելեոն, գրում է WWLP.



Բարբարա Բոքսերը Բարաք Օբամային կոչ է արել շտկել իր սխալները և ճանաչել Հայոց ցեղասպանությունը

2011-04-15

Իր ուղերձում Բոքսերը մասնավորապես նշել է. «Այս տարի լրանում է Հայոց ցեղասպանության 95-րդ տարին, մի ողբերգության, որը սև բիծ է թողել մարդկության գիտակցության մեջ: Սակայն այդ ողբերգությունը հատկապես հայ ժողովրդի համար ավելի ցավոտ է դարձնում Օսմանյան կայսրությունում նախօրոք ծրագրված հայերի կոտորածը Ցեղասպանություն ճանաչելու՝ ԱՄՆ իշխանությունների անընդունակությունը»: Բոքսերը դիմել է Օբամային ամերիկյան ղեկավարության այդ սխալը շտկելու կոչով:

Ընդ որում, ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի անդամը հիշեցրել է, որ 2008 թվականին, դեռևս լինելով սենատոր, Օբաման ասաց, որ Հայոց ցեղասպանությունը ոչ թե պնդում, անձնական կարծիք կամ տեսակետ է, այլ ապացուցված և անվիճելի փաստ: «Չճանաչելով այդ փաստը՝ ԱՄՆ իշխանությունները երկարացնում են Ցեղասպանության զոհերի ժառանգների, ինչպես նաև ողջ հայ համայնքի ցավը», - ընդգծել է Բոքսերը՝ ավելացնելով, որ չնայած դրան, ԱՄՆ իշխանությունները շարունակում են Ցեղասպանությունը բնութագրելու համար կիրառել «ոչնչացում», «զանգվածային գնդակահարություն» և «սպանություն» տերմինները: Նրա խոսքով, դա ոչ միայն վիրավորում է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը և նրանց ժառանգներին, այլև վնասում է Ամերիկային:



Ադամ Շիֆը մասնակցեց ԱՄՆ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակմանը

2011-04-14

Հանդիպման ընթացքում քննարկվել է Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ

աշխատանքի նոր ռազմավարությունն ու ԱՄՆ հայ համայնքի մյուս կարևոր հարցերը:

Հանդիպումից հետո Ադամ Շիֆն ու Քեն Խաչիկյանը մասնակցեցին ԱՄՆ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջոցառմանը Կապիտոլիական բլուրում, հաղորդել են կոնգրեսականի գրասենյակից:



ԱՀՀ-ն կոչ է անում ԱՄՆ բոլոր կոնգրեսականներին աջակցել Հայոց ցեղասպանության ճանաչմանը

2011-04-14

Զրյուցի ընթացքում քննարկվել են հիմնական քաղաքական հարցերը, կապված Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի անվտանգության հետ՝ Ադրբեջանի ռազմատենչ հայտարարությունների լույսի ներքո, Հայոց ցեղասպանության ճանաչումն ու Ցեղասպանության 96-ամյակին նվիրված միջոցառումները Կապիտոլիումի բլրին:

Կոնգրեսական Շերմանը հաստատել է իր աջակցությունը Հայաստանին ու Լեռնային Ղարաբաղին և Հայոց ցեղասպանության ճանաչմանը: Նա նշել է նաև, որ ելույթ է ունեցել Կոնգրեսում Ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջոցառմանը: «Մենք ողջունում ենք կոնգրեսական Շերմանի դերը ԱՄՆ-ի ու Հայաստանի, ԱՄՆ-ի ու Լեռնային Ղարաբաղի միջև հարաբերությունների ամրապնդման գործում: ԱՀՀ-ն կոչ է անում բոլոր կոնգրեսականներին աջակցել Հայոց ցեղասպանության ճանաչմանը», -ասել է Արդունին:

Բրեդ Շերմանը Կոնգրես է ընտրվում արդեն 8-րդ անգամ Կալիֆորնիայի նահանգից: Նա ԱՄՆ Կոնգրեսի արտաքին գործերի կոմիտեի անդամ է:

ՀՀ սփյուռքի նախարարություն



«Առավոտ». Սփյուռքի նախարարը հայրենական գործ կանի, եթե «Մեկ ազգ, մեկ մշակույթ» նախագիծը փակի

2011-04-15

անաչ լույսի տակ անցնող ադրբեջանցին ինձ մշակութային առումով ավելի մոտ է, քան կարմիրի տակ վազող հայը: Մակայն մենք ադրբեջանցու հետ տարբեր ազգեր ենք ներկայացնում՝ այնքան տարբեր, որ եթե, Աստված մի արասցե, հակադիր խրամատներում հայտնվենք, կարող ենք իրար վրա կրակել: Գլենդեյլից այստեղ եկող ռաբիսը եւ նրա երգերը լսող երեւանցի ռաբիսը, անշուշտ, նույն մշակույթի կրողներն են: Բայց այդ մշակույթը վերագրել ամբողջ ազգին՝ չի կարելի:

Մի խոսքով, «Մեկ ազգ, մեկ մշակույթ» կարգախոսը կեղծ է, շինծու: Հայերի, ինչպես նաև բոլոր այլ ազգերի մեջ կան հսկայական մշակութային տարբերություններ: Մշակույթը մեզ չի կարող միավորել, այն մեզ բաժանում է: Կրոնը, հավատքը՝ մույնպես, ցավոք, չեն կարող դառնալ միավորող գործոն, ինչպես որ դա հրեաների մոտ է: Ոչ բոլոր հայերը, եթե նույնիսկ մկրտված են եւ որոշակի ծեսեր են պաշտպանում, քրիստոնեական արժեքների կրողներ են: Մայրենի լեզուն, թերևս, այդպիսի միավորող դեր կարող է խաղալ: Այստեղ շատ բան կախված է մեզնից, նկատի ունեն՝ Հայաստանի Հանրապետությունից: Մենք պետք է փայփայենք մեր պետական լեզուն, ոչ թե էլիտար օտարալեզու դպրոցներ ստեղծենք»: Խմբագրականի հետագա տողերում կարդում ենք. «Ես չգիտեմ, թե ինչով է ավարտվելու Թամար Պողոսյան-Հրանուշ Հակոբյան «փոխհրաձգությունը»:

Հուսով եմ, դատարանը կպարզի եւ ճիշտ որոշում կընդունի: Բայց տիկին Հակոբյանը շատ մեծ հայրենանվեր գործ կանի, եթե «Մեկ ազգ, մեկ մշակույթ» նախագիծը ընդհանրապես փակի: «Տաշի-տըմբլ» խմբերը Հայաստանում առանց Սփյուռքի էլ են լիքը»:



Փոխադարձ շնորհավորանքներ և փոխշահավետ համագործակցություն

2011-04-14

Ընդունելությունը տարբերվում էր իր բնույթով, քանի որ այս անգամ առավելապես գերիշխում էր փոխադարձ շնորհավորանքների մթնոլորտը՝ օրերիս նշվել էր ՀՀ սփյուռքի նախարարի, իսկ ապրիլի 15-ին տոնվելու է Արա Աբրահամյանի ծննդյան օրը: Տոնական տրամադրությունը սակայն, ամենևին չխանգարեց գործնական զրույցին:

Հանդիպման ընթացքում արդյունավետ համագործակցության ավանդույթ ունեցող գործընկերները քննարկեցին 2011թ. ՀՀ սփյուռքի նախարարության կողմից իրականացվելիք մի շարք ծրագրերի և միջոցառումների իրականացման հնարավորությունները, ծրագրեցին նոր ձեռնարկումներ:



Ազգային և համամարդկային ներդաշնակ զարգացում

2011-04-14

Լ. Մանուչարյանին ընդունեց դպրոցի տնօրեն Առաքելյան Օֆելյա Վազգենովնան, այնուհետև միասին ուղևորվեցին դեպի դահլիճ՝ մասնակցելու միջոցառմանը: Տնօրենի խոսքին հաջորդեց Լ. Մանուչարյանի ողջույնի խոսքը: Նա առաջին հերթին շնորհակալություն

հայտնեց Օֆելյա Վազգենովնայից ազգանվեր գործունեության համար: Նա նաև նշեց, որ 1650 դպրոցը աչքի է ընկնում իր յուրահատկությամբ. այն եզակի բազմազգ կրթական համալիրներից է: Հնչեցին շնորհավորանքներ և բարեմաղթանքներ:

Ակնածանքի և մեծարանքի է արժանի այն փաստը, որ մի բեմի վրա միասնական հանդես են գալիս տարբեր ազգերի ներկայացուցիչներ և մեկը մյուսին ծանոթացնում է իր երկրի մշակույթին, ազգային ավանդույթներին, երգին, պարին: Պարզապես հիանալի է, երբ ազգությամբ ռուս երեխան նվագում է Արամ Խաչատրյան և ներկայացնում հայ մշակույթը:

Միջոցառումից հետո Օ. Առաքելյանը Լ. Մանուչարյանին ուղեկցեց դպրոցի թանգարան, որտեղ տնօրենի ձեռքի աշխատանքից գատ տեղ էին գտել տարբեր ազգերի պատկանող մշակութային նմուշներ: Հատկանշական է նշել նաև հայկական թոնրի մասին, որն իր ուրույն տեղն էր գտել թանգարանում՝ ստեղծելով լիարժեք հայկական կոլորիտ:

Համաշխարհային մշակույթը ձևավորվում է ազգային մշակույթներից: Միայն սեփական մշակույթը սերտելով մարդ կարող է դառնալ բարեկիրթ և հետևաբար միայն այդ դեպքում կարող է հասկանալ և հարգել մեկ այլ ազգի մշակույթ, որտեղից էլ զարգանում են մարդկային փոխհարաբերությունները, իսկ երեխաները կրթվում և դաստիարակվում են այն ջերմ և հյուրընկալ մթնոլորտում, որը տիրում է դպրոցում:



ՀՀ սփյուռքի նախարարությունում կազմակերպվեց տեսակոնֆերանս «Մոսկվայի հայ երիտասարդների ասոցիացիայի» անդամների մասնակցությամբ

2011-04-13

Մոսկվայի տասնչորս բուհերի հայազգի ուսանողների և շրջանավարտների մասնակցությամբ ստեղծված ասոցիացիան՝ Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական համալսարանի ասպիրանտ Հենրի Սարգսյանի գլխավորությամբ, ակտիվ գործունեություն է ծավալում Մոսկվայի հայ երիտասարդության շրջանում:

Հայաստանից տեսակոնֆերանսին մասնակցում էին ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ Վարդան Մարաշյանը, նախարարության աշխատակազմի վարչությունների և բաժինների պետեր:

Ողջունելով տեսակոնֆերանսի մասնակիցներին՝ Վ.Մարաշյանը ներկայացրեց ՀՀ սփյուռքի նախարարության գործունեությունն ու առաջիկա ծրագրերը՝ կարևորելով նախարարության հատկապես երիտասարդական ծրագրերին

մոսկվաբնակ հայ երիտասարդության ակտիվ մասնակցությունը:

Մասնավորապես քննարկվեց ՀՀ սփյուռքի նախարարության երիտասարդական «Արի տուն», «Երիտասարդ առաջնորդների դպրոց», «Երիտասարդ լրագրողների դպրոց» և այլ ծրագրերին Մոսկվայի հայ երիտասարդության մասնակցության հնարավորությունները: Նախարարության աշխատակիցները ներկայացրեցին ՀՀ սփյուռքի նախարարության էլեկտրոնային գրադարանը և «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականը, անդրադարձ կատարվեց նաև ՀԲԸՄ Հայկական վիրտուալ համալսարանին և «Դեպի Հայք» հիմնադրամի ծրագրերին:

Կարևորելով ՀՀ սփյուռքի նախարարության կողմից իրականացվող ծրագրերը հայապահպանության, Հայրենիք-Սփյուռք գործակցության ամրապնդման և զարգացման գործում՝ ասոցիացիայի անդամները պատրաստակամություն հայտնեցին ակտիվորեն ներգրավվել և աջակցել դրանց իրականացմանը, մասնավորապես՝ Մոսկվայի տասնչորս բուհերի հայ ուսանողությանը նախարարության ծրագրերը ներկայացնելու առումով: Մոսկվաբնակ հայ երիտասարդներն ընգծեցին նաև հայազգի երիտասարդ մասնագետների պրակտիկան Հայաստանում անցկացնելու անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն կստեղծի Սփյուռքի մասնագիտական ներուժն ի նպաստ Հայրենիքի զարգացման և հզորացման օգտագործելու:



**Հրանուշ Հակոբյանն ընդունեց
Հայաստանի Հանրապետությունում
Վրաստանի արտակարգ և լիազոր
դեսպան Թենգիզ Շարմանաշվիլին**

2011-04-12

Ողջունելով հյուրին՝ նախարար Հ.Հակոբյանը ծանոթացրեց ՀՀ սփյուռքի նախարարության գործունեությանն ու իրականացվող ծրագրերին:

Հ.Հակոբյանը ներկայացրեց նաև վիրահայությանը հուզող հարցերը, որոնցով Վրաստանի հայերը հաճախ դիմում են ՀՀ սփյուռքի նախարարությանը:

Դեսպան Թ.Շարմանաշվիլին խնդրեց աջակցել Թբիլիսիում կայանալիք գործարարների հավաքին, որի ժամանակ քննարկվելու են Մամջիսե-Ջավախքի նահանգում իրականացվելիք ներդրումային ծրագրերը:

Կողմերը կարծիքներ փոխանակեցին նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ:



Հրանուշ Հակոբյան. Եթե լրատվամիջոցները 4-րդ իշխանությունն են, ապա բլոգերները 5-րդ իշխանությունն են

2011-04-12

«Եթե լրատվամիջոցները 4-րդ իշխանությունն են, ապա ես Ձեզ անվանում եմ 5-րդ իշխանություն», - ասաց Հրանուշ Հակոբյանը բլոգերներին:

Հրանուշ Հակոբյանն ասաց, որ անձնական բլոգ բացելու մտադրություն դեռևս չունի:

«Նման փորձ ունեցել եմ, անձնական էջ էի բացել համադասարանցիներ սոցիալական ցանցում և դա բուռն աղմուկ բարձրացրեց տարբեր մարդկանց և բարեկամների շրջանում», - ասաց նախարարը և ավելացրեց. «Մենք Facebook սոց. ցանցում բացել ենք «Համահայկական երիտասարդական խորհրդարան» (Pan-Armenian Youth Parliament) խումբ, որը բացելու առաջին իսկ օրը ստացանք 200-ից ավելի արձագանք: Մա շատ հարմար տարբերակ է օնլայն շփվելու, հարցեր ստանալու և դրանց պատասխանելու համար»:

Խոսելով բարձր տեխնոլոգիաների մասին՝ Հրանուշ Հակոբյանը նշեց, որ շատ կցանկանար, որ Հայաստանում ներդրվեին նանոտեխնոլոգիաներ:

Բլոգերները նշեցին, որ ՀՀ սփյուռքի նախարարության կայքը եռալեզու է, սակայն ոչ բոլոր լեզուներըն են պարբերաբար թարմացվում և ըստ բլոգերների սա թերություն է: Այս հարցի շուրջ Հրանուշ Հակոբյանը նշեց. «Շատ լավ է, որ դուք նկատում եք թերությունները և հուշում մեզ դրանց մասին: Մենք կընդունենք ձեր բոլոր առաջարկները»:

Հրանուշ Հակոբյանն ավելացրեց, որ նախարարության ծրագրերից է նաև էլեկտրոնային գրադարանի ստեղծումը և հայկական սփյուռքի էլեկտրոնային քարտեզի ստեղծումը:



«Կտոր մը Հայրենիք». մրցույթը մեկնարկել է

2011-04-12

«Կտոր մը Հայրենիք» հայագիտական երիտասարդական գիտական հետազոտությունների մրցանակաբաշխությունը նվիրված է Հայաստանի անկախության քսանամյակին:

Բոլոր ժամանակներում հայ ստեղծագործ ու ճկուն մտքի շնորհիվ է հնարավոր եղել հայ ժողովրդի դիմակայումը ճակատագրի փորձություններին: Յուրաքանչյուրն ունի Հայրենիքի իր ընկալումը, եւ այս գիտական հետազոտությունները հրաշալի հնարավորություն են ընձեռում ճանաչելու այն երիտասարդության աչքերով:

Մրցանակաբաշխության նպատակն է վերհանել հայ երիտասարդի մտահոգությունները, Հայրենիքի ամրապնդմանն ու հզորացմանն ուղղված քայլերի կանխատեսումը, եւս մեկ անգամ հաստատել նրանց կարեւորագույն դերակատարությունը հայոց պետականության զարգացման գործում:

«Կտոր մը Հայրենիք» երիտասարդական հայագիտական հետազոտությունների մրցույթին կարող են մասնակցել ուսանողներ, ասպիրանտներ եւ մինչեւ երեսունհինգ տարեկան երիտասարդ գիտնականներ Հայաստանից եւ Սփյուռքից: Հայտադիմումների եւ գիտական հետազոտությունների ներկայացման վերջնաժամկետն է ս.թ. սեպտեմբերի 5-ը:



Քննարկվեցին Ռուսաստանի հայ համայնքի կրթական հիմնախնդիրներին առնչվող հարցեր

2011-04-11

Նախարար Հ.Հակոբյանը ներկայացրեց ՀՀ սփյուռքի նախարարության գործունեությունը և 2011թ.

իրականացվելիք ծրագրերը: Քննարկվեցին

Ռուսաստանի հայ համայնքի կրթական հիմնախնդիրներին առնչվող հարցեր, մասնավորապես անդրադարձ կատարվեց հայկական դպրոցներին աջակցելու, ռուսալեզու հայերի համար հայերենի ուսուցման ժամանակակից դասագրքեր ստեղծելու հարցերին՝ նպատակ ունենալով հայերենը ուսուցանելը և առավել հասանելի դարձնել մեծ թվով ռուսաստանաբնակ հայերի համար:

Ե.Զորյանը և Ս.Կաբակյանը մանրամասներ ներկայացրեցին համապատասխանաբար ՀԲԸՄ Հայկական վիրտուալ համալսարանի և «Դեպի Հայք» հիմնադրամի գործունեության վերաբերյալ:

Քննարկվեցին նաև ՀՀ սփյուռքի նախարարության կողմից իրականացվող երիտասարդական ծրագրերին Ռուսաստանի հայ համայնքի առավել ակտիվ մասնակցության հնարավորությունները: Հանդիպման մասնակիցները պատրաստակամություն հայտնեցին աջակցել Սփյուռքի ներուժի համախմբմանն ուղղված ՀՀ սփյուռքի նախարարության ծրագրերին:

Սփյուռք



ԱՔԽԱԶԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ԱՇԽԱՏՈՒՄ Է ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԱՅՆՏԵՂ ԳՈՐԾՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

2011-04-16

Մեմինարի աշխատանքները ղեկավարեց Աբխազիայի հայ համայնքի կրթության հանձնաժողովի նախագահ Խաչիկ Մինասյանը: Մեմինարի աշխատանքներին մասնակցում էին Աբխազիայի համայնքի ղեկավար՝ Մուրեն Կերսեյանը, արտաքին կապերի բաժնի վարիչ՝ Գալուստ Տրապիզոնյանը և այլոք:

Ուսմասվարի աշխատանքի մասին խոսեց Գագրայի Խ. Աբովյանի անվան համար 3 միջնակարգ դպրոցի ուսմասվար Ա. Կապիկյանը, իսկ տնօրենի աշխատանքի մասին՝ Գուդաուրթայի շրջանի Ագարակ գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն Շ. Քեյանը:

Ելույթներ ունեցան Գուլիրիպշի շրջանի կրթության բաժնի վարիչ Ազնիվ Մրվանյանը, Գագրայի շրջանի տեսուչ Գոհար Ավետիսյանը, <Համշեն> թերթի խմբագիր՝ Արտավազ Սարեցյանը, Ս. Կերսեյանը, Գ. Տրապիզոնյանը և ուրիշներ:

Մեմինարի հիմնական նպատակն էր բարձրացնել Աբխազիայում գործող հայկական դպրոցների ընդհանուր կրթական մակարդակը, կարևորվեց նաև դպրոցների վերանորոգման և հայկական դպրոցները մանկավարժական կադրերով ապահովելու խնդիրը:

Այսպիսով, սկիզբ դրվեց պարբերաբար հանդիպումների, որոնց նպատակը կլինի արծարծել և փորձել լուծել հայկական դպրոցների հետ կապված շատ խնդիրներ ու հարցեր:



ԵՎՐԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ-2011

2011-04-15

Ամեն տարի Քրիստոսի Սուրբ Հարության և դրան նախորդող օրերին Եվրոպական որևէ երկրում համախմբվում են տասնյակ հարյուրավոր հայ երիտասարդներ՝ Եվրոպական և Մերձավոր Արևելքի երկրներից, հայապահպանության գաղափարը մշտաբար պահելու մեծագույն ցանկությամբ: Համաեվրոպական հայկական խաղերի կազմակերպումը ոչ միայն մարզական միջոցառում է, այլև Եվրոպայի տարբեր երկրներում բնակվող հայ երիտասարդների համախմբմանն ու հայապահպանությանը միտված բացառիկ դրսևորում:

«Եվրահայկական խաղերին» Հայաստանի Հանրապետությունից մարզիկների մասնակցությունը՝ օրեցօր զարգացող, կայունացող ու ամրապնդվող Հայաստան-

Սփյուռք կապերի վկայությունն է:

Ժնևի հայ համայնքը ձևավորվել է 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին: Այստեղ բնակվում է շվեյցարահայության զգալի մասը՝ շուրջ 1000 մարդ: Ժնևում է կենտրոնացված համայնքի ազգային կառույցների հիմնական մասը: Առաջին հայկական կազմակերպություններից է Ժնևի Հայկական միությունը, որը հիմնադրվել է 1943 թվականին: Ծնունդով լիբանանցի, այժմ շվեյցարաբնակ հայազգի Վահե Կապրաշը ավելի քան 20 տարի գլխավորել է Շվեյցարիայի հայկական միությունը: Ներկայումս Միության նախագահն է Զարե Կուրկջյանը:

Միությունը մեծ դերակատարություն ունի Սփյուռքում հայապահպանության, երիտասարդության հայեցի դաստիարակության գործում: Բազմաթիվ համայնքային միջոցառումներից բացի, միությունը կազմակերպում է նաև միջհամայնքային սպորտային տարբեր մրցաշարեր: Մրցումներ են անցկացվում մինի ֆուտբոլի, բասկետբոլի, վոլեյբոլի, սեղանի թենիսի, բադմինտոնի, շախմատի մարզաձևերից:

ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի համահայկական, միջազգային և եկեղեցական կառույցների հետ կապերի վարչություն



Կալիֆորնիայի հայերը ցույց են անցկացնելու նախագահ Օբամայի դեմ

2011-04-15

«Նախագահ Օբաման նախընտրական քարոզարշավի շրջանակներում այցելելու է Լոս Անջելես և մինչև ապրիլի 24-ը գտնվելու է նահանգում: Օբաման պետք է

լսի մեր համայնքի ձայնը, որը հիասթափվել է նրանից, երբ նա չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Կալիֆորնիայի համայնքն ԱՄՆ-ում սփյուռքի ամենամեծ համայնքն է, և մենք պետք է մեր կարծիքը հասցնենք ոչ միայն ԱՄՆ նախագահին, այլ նաև բոլոր ԶԼՄ-ներին, որոնք լինելու են Օբամայի հետ: Մենք կոչ ենք անում բոլոր հայերին պաշտպանել մեզ. մեր ձայնը պետք է լսվի», - հայտարարել են ակցիայի կազմակերպիչները, գրում է Asbarez.com-y:



Ապրիլի 18-24-ը Կալիֆորնիայում կնշվի որպես Հայոց ցեղասպանության զոհերի շաբաթ

2011-04-15

Արարողությունը ներկա էին կոնգրեսականներ, համայնքի ներկայացուցիչներ և ԱՄՆ ՀԱԵ Արևմտյան թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Հովնան Տերտերյանը: «Այսօր մենք աղոթում ենք 20 դարի առաջին ցեղասպանության զոհերի հոգիների հանգստության համար:

Գալիֆորնիայի նահանգի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը հոգևոր խթան հանդիսացավ ԱՄՆ հայ համայնքի համար»,-ասել է արքեպիսկոպոսը:

Ըստ ԱՀԽ Խորհրդի անդամ Սևակ Խաչատուրյանի, Գալիֆորնիայի օրենսդիրները կարևոր քայլ են կատարել՝ ճանաչելով մարդկության դեմ կատարված այդ ոճրագործությունը: «Ես հուսով եմ, որ կգա ժամանակը, երբ դաշնային կառավարությունը, ինչպես նաև Թուրքիայի կառավարությունը կհաշտվեն պատմական իրողության հետ և վերջապես կճանաչեն Հայոց ցեղասպանությունը»,-ասել է Խաչատուրյանը:

Վրաստանի Ռուսթավի քաղաքում գործող «Սուրբ Պարթև» կիրակնօրյա դպրոցում կրթությունը դարձել է երկամյա

2011-04-15

Երբ Ազգային Առաջնորդարանում կրթական պատասխանատուի պաշտոնը ստանձնեց երիտասարդ Մարի Առաքելովան, որոշ փոփոխություններ կատարվեցին կիրակնօրյա դպրոցների ծրագրերում՝ ուսումը դարձավ երկամյա և մշակվեց դպրոցի սաների գիտելիքներին համապատասխան նոր ծրագիր: Դպրոցն ունի 2-րդից մինչև 9-րդ դասարաններ՝ համալրված համապատասխան տարիքի երեխաներով, մեկ միասնական դասարան՝ 9- 12-րդ դասարանցի երեխաների համար և եւս մի դասարան՝ 18-60 տարեկան սաների համար:

Վահրամ Գայֆեժյանի անվան ստեղծագործողների միության



ԱԽԱԼՑԻԱՅՈՒՄ ՆՇՎԵՑ ՀԱՅ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ՎԱՀՐԱՄ ԳԱՅՖԵՋՅԱՆԻ 132-ԱՄՅԱԿԸ

2011-04-15

Յուրահանդեսի ընթացքում նորաստեղծ

կազմակերպության հիմնադիր անդամներից

Ալեքսանդր Իգիթխանյանը ներկա բոլոր հյուրերին ներկայացրեց ծննդով

Ախալցխացի մեծ հայ գեղանկարիչ Վահրամ Գայֆեժյանի կյանքն ու

գործունեությունը, որին հետևեց նկարչի մասին պատմող վավերագրական ֆիլմի դիտումը:

Վարդգես Սուրենյանցը, Հակոբ Կոջոյանը և Վահրամ Գայֆեժյանը հայ արվեստի այն երեք մարաջախտներն են՝ ծնված Ախալցխա քաղաքում, ովքեր 20-րդ դարում շարունակեցին հայ կերպարվեստի դարավոր ու փառավոր ճանապարհը:



Կլենտլիի Մեջ Նշուեցաւ «Ալիք» Օրաթերթի 80ամեակը

2011-04-14

Ձեռնարկի հանդիսավարն էր ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի կեդրոնական կոմիտեի Հանրային յարաբերութիւններու յանձնախումբի պատասխանատու Սարո Նազարեան, որուն բացման խօսքէն ետք, ողջոյնի եւ շնորհաւորական խօսքերով ելոյթ ունեցաւ «Ասպարեզ» օրաթերթի խմբագիր Արօ Պօղիկեան, ապա՝ ՀՄԸՄի «Արարատ» մասնաճիւղի վարչութեան կողմէ Ռուբիկ Գուրջեան:

Արտայայտուողները իրենց խօսքերուն մէջ նշեցին, թէ «Ալիք»ը իրանահայութեան համար լոկ լրատու թերթ մը չէ եղած. անիկա եղած է մտաւորականութեան հաւաքատեղի-ժամադրավայր, սերունդ դաստիարակող օճախ, իրանահայ գաղթօճախի անբաժան մասնիկ, որ իր գոյութեան բոլոր ժամանակահատուածներուն, պատմական բոլոր վերիվայրումներու ընթացքին անձնուրացութեամբ ու յանձնառութեամբ ծառայած է հայութեան:

Օրուան առիթով իր սրտի խօսքը փոխանցեց ազգային-հասարակական գործիչ Սեպուհ Յովհաննիսեան: Ան իւրայատուկ անմիջականութեամբ վկայութիւններ փոխանցեց «Ալիք»ի առաջին տասնամեակներու խմբագիրներուն ու արտօնատէրերուն մասին՝ ներկաներուն պատմելով մտաւորական այդ փառանգի ինքնագոհ նուիրաբերումի առօրեայէն:

Յուցադրուեցաւ «Հորիզոն» հեռուստակայանին կողմէ (Յովան Թաշճեանի պատրաստութեամբ) «Ալիք»ի մասին նկարահանուած տեսագրութիւնը: Ապա խօսք առաւ «Ալիք»ի արտօնատէր ճարտարապետ Ալպերթ Աճէմեան, որ շրջանիս հայ հասարակութեան հանդիպելու ծրագիրով յատկապէս հրաւիրուած էր Լոս Անճելըս:

Աճէմեան հանգամանօրէն ներկայացուց «Ալիք»ի գլխաւոր իրագործումները՝ շեշտելով թերթի անկողմնակալ լրատուութեան աղբիւր ճանչցուելու, իբրեւ գաղափարական հնոց ծառայած ըլլալու ու շրջանի հայութեան սերն ու յարգանքը շահած ըլլալու փաստերը:

Այդ սիրոյ ու յարգանքի ապացոյցներէն մէկը, ըսաւ Աճէմեան, թերթի հրատարակութեան վայրէն հազարաւոր մղոններ հեռու այս քաղաքին մէջ, այսպիսի խումներամ ներկայութեամբ անոր տարեդարձը նշելու իրողութիւնն է: Աճէմեան գնահատեց «Ալիք»ի տարբեր շրջաններու խմբագրական կազմերուն, թերթի աշխատակիցներուն ու անոր յարկին տակ բոլոր աշխատողներու անսակարկ նուիրումը, որուն շնորհիւ, «Ալիք»ը կրցած էր դիմագրաւել ամէն տեսակի մարտահրաւերներ:

Ա. Աճէմեանի բանախօսութենէն ետք, ելոյթով հանդէս եկաւ ՀՄԸՄի «Արարատ» երգչախումբը: Այս նշանակալից առիթով իր օրհնութեան խօսքով բեմ բարձրացաւ Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջնորդ Մուշեղ արք. Մարտիրոսեան: Ձեռնարկի վերջին բաժինով տեղի ունեցաւ ընդունելութիւն, որուն ընթացքին

կտրուեցաւ 80ամեակի առիթով պատրաստուած կարկանդակը՝ տասնամեակներ «Ալիք»ի տպարանին մէջ աշխատած գրաշար Յովսէփ Շահբազեանի եւ արտօնատէր Ալպէրթ Աճեմեանի կողմէ:

Ձեռնարկին ներկայ էին շուրջ 400 հանդիսատեսներ:

Asbarez



ANCA-ն միանում է ապրիլի 24-ն Ադոքքի օր հայտարարելու՝ հայ կրօնական առաջնորդների կոչին

2011-04-13

Այդ օրը նշվելու է ն' Ջատիկը, ն' 1915-1923թթ.

Օսմանյան կայսրությունում Հայոց

ցեղասպանությունը:

«Մենք ողջունում ենք մեր հոգևոր հայրերի կոչը՝ Ադոքքի օր հայտարարել ապրիլի 24-ը, որը նշանավորում է Հիսուս Քրիստոսի Հարությունն ու Յեղասպանությունը վերապրած հայ և այլ քրիստոնյա ժողովուրդների վերածնունդը», - ասել է ANCA-ի գործադիր տնօրէն Արամ Համբարյանը:

Ուկրաինայի հայ երիտասարդները կոչ են անում Վիկտոր Յանուկովիչին ճանաչել Հայոց ցեղասպանությունը

2011-04-13

Ըստ Ուկրաինայի հայ երիտասարդների ասոցիացիայի նախագահ Դավիթ Մկրտչյանի, ՈւՀԵԱ-ն հուսով է, որ իրենց ձայնը լսելի կլինի Ուկրաինայի նախագահին:

«Հայոց ցեղասպանության փաստը դատապարտվել ու ճանաչվել է աշխարհի շատ երկրների կողմից, այդ թվում նաև Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Կանադայի, Ֆրանսիայի, Բելգիայի և այլ երկրների կողմից: Սակայն, Ուկրաինան մինչ օրս չի որոշել իր վերաբերմունքն այդ հանցագործության հանդէպ», - ասել է Մկրտչյանը, հաղորդում է Analitika.at.ua-ն:

2010թ. ապրիլի 23-ին հայտնի ուկրաինացի քաղաքագետներ, գիտնականներ, հասարակական ու քաղաքական գործիչներ, ինչպէս նաև Ուկրաինայի մի շարք ազգային համայնքների ներկայացուցիչներ դիմել էին Ուկրաինայի նախագահին Հայոց ցեղասպանությունն օրենսդրորէն ճանաչելու կոչով: Նման կոչերով դիմել են նաև Կիևի Գոլոսենի շրջանային խորհուրդը, Իզյումսկի քաղխորհուրդը, Չերկասսկի քաղխորհուրդն ու Կիևի քաղխորհուրդը:



Քոբուլեթիում կգործի հայկական կիրակնօրյա դպրոց

2011-04-12

ռաջին 17 աշակերտները մեծ եռանդով սկսեցին ծանոթանալ իրենց պապերի արմատներին՝ հայերեն գրել-կարդալ և խոսել կկարողանան Քոբուլեթիի Հայ համայնքի գրասենյակում: Կիրակնօրյա դպրոցի բացմանը աջակցեցին Աջարիայի հոգևոր հովիվ Տեր Արարատ քահանա Գումբալյանը, Հայ համայնքը և որոշ չափով Քոբուլեթիի քաղաքապետարանը:

Մինչ այդ, ապրիլի 7-ին առաջին անգամ Քոբուլեթիում Հայ համայնքը և հայկական եկեղեցին հանդիպեցին տեղի հայ երիտասարդների հետ: Միջոցառման ընթացքում որոշվեց, որ Բաթումիի երիտասարդների հետ միասին Քոբուլեթիի և Չաքվիի ակտիվ երիտասարդները կմասնակցեն Սփյուռքի նախարարության ծրագրերում:

Արթուր Հովհաննիսյան Աջարիայի Հայ Համայնքի մամլո ղեկավար



ANCA-ն Դավանանքի պաշտպանության համաժողովի ուշադրությունն է հրավիրել Թուրքիայում քրիստոնյաների վիճակի վրա

2011-04-12

Համաժողովի աշխատանքներին մասնակցում է ավելի քան 150 մարդ 30 միջկրոնական խմբերից: Համաժողովի հիմնադիրներն են կոնգրեսականներ Թրենթ Ֆրենքսը և Էմմանուիլ Քլիվերը, համանախագահն է Խիզեր Շուլերը, որը փախարհինեց Քլիվերին 112-րդ գումարման Կոնգրեսում:

Կազմակերպության նպատակն է ԱՄՆ Կոնգրեսին տեղեկատվություն հաղորդելը դավանանքի ազատությունների հետ կապված խնդիրների մասին: ANCA-ի ներկայացուցիչ Քեյթ Նահապետյանն աշխատում է համաժողովի հետ դավանանքի ազատության մի շարք խնդիրների շուրջ, այդ թվում նաև Թուրքիայում քրիստոնյաների շարունակվող հետապնդումների հարցում:



ԱՄՆ հայ համայնքն այլևս չի խաբվի նախագահի թեկնածուի կեղծ խոստումներին

2011-04-12

Կալիֆորնիայի հայերը փայլուն հնարավորություն ունեն ցույց տալու, որ նրանք դժգոհ են Բարաք

Օբաման Սան վարչակազմից Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում: Ֆրանցիսկոյում լինելու է ապրիլի 20-ին, Լոս Անջելեսում՝ ապրիլի 21-ին: Կալիֆորնիայում նա մասնակցելու է «Օբամայի հաղթանակը 2012-ին» հիմնադրամի ստեղծմանը:

Առաջիկա 18 ամիսների ընթացքում ԱՄՆ հայերն անցկացնելու են ցույցեր նախագահական քարոզարշավների ժամանակ մինչև 2012-ի նոյեմբերի նախագահական ընտրությունները: Դա հիմնալի պահ է նախագահի հանդեպ վստահության կորուստն ընդգծելու համար, առավել ևս, որ Օբամայի վարկանիշը հիմա ցածր է:

«Հայերը նախագահի ներողության կարիքը չունեն նրա համար, որ նա չի արտասանել «ցեղասպանություն» բառը: Նախագահ Ռոնալդ Ռեյգանն օգտագործել է այդ բառը 1981-ի ապրիլի 22-ին: Հայերի բողոքի միակ պատճառն է՝ հասկացնել տալ ԱՄՆ նախագահին, որ հայ համայնքն այլևս չի խաբվի, երբ քաղաքական գործիչները կեղծ խոստումներ են տալիս՝ ընտրողների ձայները ստանալու համար և ընտրվելուց հետո անտեսում են այդ խոստումները: 2012-ի նախագահական ընտրություններում հայերի կարգախոսը պետք է լինի «Ոչ մի ձայն և ոչ մի պեննի Օբամայի համար», - ընդգծել է Սասունյանը:



Նիժնի Նովգորոդի հայ համայնքի ջանքերով քաղաքում հայկական եկեղեցի է կառուցվում

2011-04-12

Ներկայացնելով մայրաքաղաքի արդյունավետ կառավարման առաջնահերթությունները՝

քաղաքապետն ընդգծել է, որ քաղաքապետարանը նպատակ ունի փոխշահավետ համագործակցություն ծավալել գործարար ոլորտի ներկայացուցիչների հետ: «Բիզնես տրամաբանություն ունեցող ոլորտների մասնավոր կառավարման արդյունքում ոչ միայն կշահեն կոնկրետ ուղղությունները, այլ նաև բյուջեից ինայված զգալի միջոցները կուղղվեն սոցիալական, բնապահպանական, կրթական և այլ ոլորտներ», - նշել է Կարեն Կարապետյանը և հավելել, որ քաղաքապետարանը բաց է ցանկացած համագործակցության, որն ուղղված է մայրաքաղաքի զարգացմանը:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ Օլեգ Սորոկինը Կարեն Կարապետյանին է ներկայացրել քաղաքային տնտեսության կառավարման ոլորտում վերջին տարիների իրենց փորձը: Խոսելով շուրջ 35000-անոց հայկական համայնքի մասին՝ Օլեգ Սորոկինը նշել է, որ այն ակտիվ ներգրավված է քաղաքի տնտեսական և մշակութային կյանքում: Ներկայում համայնքի հնարավորություններով հայկական եկեղեցի է կառուցվում:

Կողմերը մտքեր են փոխանակել կոմունալ տնտեսության, առողջապահության, տրանսպորտի և կրթության ոլորտներում իրականացվող ծրագրերի վերաբերյալ: Երևանի և Նիժնի Նովգորոդի քաղաքապետերը քննարկել են նաև հնարավոր համագործակցության հեռանկարները, հաղորդում է Քաղաքապետարանի հասարակայնության հետ կապերի վարչությունը:



Իսպանիայի Հայ Դատի հանձնախումբը ողջունում է Արգենտինայի դատարանի որոշումը Հայոց ցեղասպանության մասին

2011-04-12

Գրեգորիո Հայրապետյանը դեռևս 2000 թվականին հայց էր ներկայացրել Արգենտինայի դատարան՝ պահանջելով իրեն տեղեկություններ հաղորդել Ցեղասպանությանը զոհ դարձած իր հարազատների մասին:

Հետաքննության ընթացքում դատարանը փաստաթղթեր էր հավաքել Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Գերմանիայի, Վատիկանի, Ֆրանսիայի եւ այլ երկրների արխիվներից՝ Օսմանյան կայսրությունում հավատարմագրված դեսպանների զեկուցագրեր, գաղտնի հաղորդագրություններ, դիվանագիտական նամակագրություններ եւ այլն, որոնք ապացուցում են, որ Օսմանյան Թուրքիան իրականացրել է հայերի կանխամտածված ցեղասպանություն, որին զոհ է գնացել 1,5 միլիոն մարդ, իսկ փրկվածները ստիպված են եղել լքել իրենց հայրենիքը եւ բնակություն հաստատել այլ երկրներում:

Պաշտոնական Անկարան, հավատարիմ իր ժխտողական քաղաքականությանը, դատապարտել է Արգենտինայի դատարանի որոշումը:



Հայ համայնքի ձայնը 70-միլիոնանոց Թուրքիայում հազիվ թե կարողանա ազդել ընտրությունների արդյունքների վրա

2011-04-12

Այդ մասին PanARMENIAN.Net ի թղթակցի հետ զրույցում հայտարարել է Կովկասի ինստիտուտի տնօրեն, քաղաքագետ Ալեքսանդր Իսկանդարյանը: Ըստ նրա, եթե նրանք ընտրվեին, կմիանային որևէ կուսակցության: «Հարկ է նշել, որ 60-70 հազար կազմող հայ համայնքի ձայնը 70-միլիոնանոց Թուրքիայում հազիվ թե կարող է ազդել ընտրությունների արդյունքների վրա: Ուստի, հայազգի պատգամավորներն այնքան էլ պետք չեն», - ասել է Իսկանդարյանը:

Ապրիլի 11-ին Թուրքիայի խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցությունները պետք է ներկայացնեն թեկնածուների ցուցակները: Ինչպես հաղորդում են թուրքական ԶԼՄ-ները, ոչ մի ցուցակում հայազգի թեկնածու չկա: Հայազգի թեկնածուների առաջադրելու մտադրության մասին ասում էին իշխող ԱԶԿ և գլխավոր ընդդիմադիր Ժողովրդահանրապետական կուսակցության ներկայացուցիչները:

Ապրիլի 19-ին Հաագայում տեղի կունենա ոգեկոչման համերգ՝ նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին

2011-04-11

Համերգը կայանալու է գերմանական եկեղեցում: Համերգի ծրագրում հնչելու են Կոմիտասի, Բաբաջանյանի, Յոհան Սեբաստիան Բախի ստեղծագործությունները:

ԱՄՆ-ում կկայանա պրոֆեսոր Շեմայանի «Հայ փախստականները Պորտ Սաիդում, Եգիպտոս 1915թ.» դասախոսությունը

2011-04-11

Դասախոսության ընթացքում կքննարկվի բռնագաղթի ու ոչնչացման վերջին փուլը, երբ հայերը հասան Սիրիա: «Վրանային ավանը» Պորտ Սաիդում փրկության միակ վայրն էր Մերձավոր Արևելքում 1915թ. վերապրածների համար: Ճամբարը ստեղծվել էր 1915թ. սեպտեմբերի կեսին, երբ այնտեղ տեղափոխվեցին Մուսա լեռան պաշտպանները: Փախստականները մնացին Պորտ Սաիդում մինչև 1919թ.:

Դասախոսության մեջ ասվում է այն մասին, թե ինչպես էր կառավարվում ճամբարը, ինչպիսին էր Եգիպտոսի հայերի արձագանքը, ինչ միջոցներ ձեռնարկվեցին փախստականների վիճակի բարելավման համար: Պրոֆեսոր Շեմայանը կպատմի նաև այն մասին, թե ինչպես էին փախստականները ապահովվում սնունդով, աշխատանքով, կրթությամբ:

Պատմության պրոֆեսոր Վահրամ Շեմայանը Կալիֆորնիայի համալսարանի հայագիտության ծրագրերի ղեկավարն է: Նա զբաղվում է Մուսա լեռան և Հայոց ցեղասպանության պատմությամբ և առաջատար մասնագետ է Մուսա լեռան պաշտպանության հարցում: 2010թ. ամռանը նա պարզևատրվել է «Վիլյամ Սարոյան» մեդալով:



Երուսաղեմում տեղի կունենա սիմպոզիում Հայոց ցեղասպանության թեմայով

2011-04-11

Միմպոզիումը կազմակերպվել է պրոֆեսոր Մայքլ Սթոունի նախաձեռնությամբ: Միմպոզիումին ներկա կզնտվեն Երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոմ Երկրորդը, Երուսաղեմում ՀՀ հյուպատոս Յուլալ Մոմջյանը, «Քաղիմա» իշխող խորհրդարանական կուսակցության ղեկավար Ջեն Էլկինը, ֆակուլտետի ղեկան Ռեուվեն Ամիթայը:

«Ցեղասպանության զոհերի հիշատակի նշանակությունը ողջ մարդկության համար» հիմնական զեկույցով հանդես կգա պրոֆեսոր Իսրայել Չարնին: Պրոֆեսոր Էլիյահու Ռիխտերը հանդես կգա «Հիշողությունից մինչև կանխարգելում», իսկ Յոսա Բիվինը՝ «Ցեղասպանության նշանակությունն իմ ընտանիքում» զեկույցներով:

Հասարակություն



Մասաչուսեթսի նահանգապետ Դևալ Պատրիկը հայտարարվել է 2011 թ. «Հայերի բարեկամ»

2011-04-15

Պատրիկի թեկնածությունն առաջադրվել է նահանգի հայ համայնքի կողմից և Հայ առաքելական եկեղեցու Արևելյան թեմը հաստատել է առաջադրումը:

Դևալ Պատրիկը Հայոց ցեղասպանության ճանաչման ջատագով է: 2010-ի նոյեմբերին նա վերընտրվել է Մասաչուսեթսի նահանգապետի պաշտոնում, գրում է The Armenian Mirror-Spectator-ը:

Մշակույթ



2011-ի ընթացքում Հունաստանում տեղի կունենան միջոցառումներ՝ նվիրված Վիլյամ Սարոյանին

2011-04-15

Հունահայ արվեստի գործիչներ՝ Նազիկ Այտինյանը, Հայկ Գասարճյանը, Էլենի Քասսեսյանը և Լորանս Մենենտյանը ընթերցեցին և արտասանեցին Սարոյանի աշխատություններից հայկական հեքիաթները՝ հույն հասարակությանը ներկայացնելով միջազգային ճանաչում ունեցող գրողին երաժիշտներ Մկրտիչ Պողոսյանի (ուղ) և Լեֆտերիս Հավուցասի (կիթառ) ընկերակցությամբ:

Վիլյամ Արմենակի Սարոյանը (անգլերեն՝ William Saroyan, Օգոստոսի 31 1908 - Մայիսի 18 1981)՝ ամերիկահայ գրող է: Ծնվել է Ֆրեզնոյում (ԱՄՆ, Կալիֆոռնիա), Բիթլիսից գաղթած հայ ընտանիքում: Սարոյան գրողի ձևավորման մեջ մեծ դեր է խաղացել ինքնակրթությունը, ամերիկյան ու համաշխարհային գրականության ընթերցումը, հարազատ ժողովրդի հոգևոր մշակույթի, ավանդույթների,

պատմության տարրերի ժառանգումը, հայկական շրջապատի ազգային ինքնատիպությունը:

Առաջին անգամ տպագրվել է 1933-ին, Բոստոնի «Հայրենիք» շաբաթաթերթում՝ Միրակ Գորյան ստորագրությամբ: Լայն ճանաչում է ձեռք բերել «Խիզախ պատանին թռչող ճոճաձողի վրա և այլ պատմավճիռներ» (1934) առաջին գրքով: Իրականության և երազանքի հակադրության, անհատի ներքին ազատության և հոգևոր գեղեցկության, սիրո և բարու հաստատման մոտիվներն են մարմնավորված Սարոյանի արձակում, որոնք հետաքրքրական լուծում են ստացել նաև նրա դրամաներում («Իմ սիրտը լեռներում է»), «Կյանքիդ ժամանակը», «Քարանձավի մարդիկ», «Հե՛յ, ո՞վ կա այդտեղ», «Կոտորածն մանկանց», «Խաղողի այգին» պիեսները:

1942-ին Սարոյանը գորակոչվել է բանակ, աշխատել զինվորական սցենարների ստեղծման վրա: Նա պատերազմն ընկալել է որպես աղետ, այդ թեման արտացոլել «Մարդկային կատակերգություն» վիպակում և «Վեսլի Ջեքսոնի արկածները» վեպում: 1950-1960-ական թթ. Սարոյանը ապրել է Եվրոպայում, ապա նորից հաստատվել ԱՄՆ-ում: Այդ տարիներին ինքնակենսագրական նյութի օգտագործումով ստեղծել է հոգեբանական վիպակների շարք:

1960-ական թթ. սկսած՝ գրել է հուշագրական ժանրի գործեր: Հատկապես ուշագրավ են Բեռնարդ Շոուին, Չառլի Չապլինին, Թ. Էլիոտին, Եղիշե Չարենցին նվիրված էջերը, հեղինակի մտորումները գրականության կոչման վերաբերյալ:

Վիլյամ Սարոյանը մահացել է մայիսի 16 1981 թվին, Ֆրեզնոյում, աճյունի մի մասը թաղված է Երևանի Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում:



Ապրիլի 13-ին Հռոմում տեղի կունենա Շառլ Ազնավուրի համերգը

2011-04-12

Ինչպես հայտնում է Musical news-ը, աշխարհահռչակ շանսոնյեի համերգը կայանալու է Parco della Musica համերգասրահում: Համերգը կայանալու է Սանտա

Չեչիլիա Ազգային ակադեմիայում «Սանտա Չեչիլիա՝ դա հիանալի է» շարքի շրջանակներում:

Վերջին անգամ Ազնավուրը հանդես է եկել Իտալիայում 1983-ին: Ինչպես գրում է գործակալությունը, իտալական հասարակությունն անհամբերությամբ է սպասում անվանի շանսոնյեի համերգին:

Շառլ Ազնավուրը ֆրանսահայ շանսոնյե է և դերասան: Իսկական անունը՝ Շահնուր Վաղինակ Ազնավուրյան: 2009-ի մայիսի 5-ից Շվեյցարիայում

Հայաստանի դեսպան է և ՄԱԿ կենտրոնակայանում երկրի մշտական ներկայացուցիչ:

Ազնավուրը ստեղծել է շուրջ 1000 երգ, խաղացել է 60 ֆիլմերում և վաճառել ավելի քան 100 մլն ձայնասկավառակ: «TIME» ամսագրի և CNN-ի անցկացրած հարցման համաձայն (1998) Ազնավուրը ճանաչվել է 20-րդ դարի լավագույն էստրադային կատարող:

Մշտապես բնակվում է Շվեյցարիայում, բայց նախկինի նման շարունակում է իրեն համարել հայ և ֆրանսիացի:

Կալիֆորնիայի հայ գրողները կհարգեն Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը

2011-04-11

Արարողության ընթացքում կընթերցվեն երիտթուրքերի կողմից ոչնչացված հայ գրողների ստեղծագործությունները, հայտնում է AWAOC-ի մամլո ծառայությունը:



Ապրիլի 16-ին Կրեմլի պալատում կանցնի Armenia Music Awards 2011 մրցանակաբաշխությունը

2011-04-11

Մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությունը Հայաստանի և սփյուռքի

երաժշտական կյանքի ամենավառ իրադարձությունն է: Այս տարի, ինչպես նախորդ տարիներին, 6-րդ ազգային մրցանակաբաշխության հյուրերը կլինեն հայկական, ռուսական և արտասահմանյան էստրադայի աստղերը:

Պարզևատրման արարողությունը կհեռարձակվի ՀՀՀ ուղիղ եթերում աշխարհի 137 երկրներում՝ Ամերիկա, Եվրոպա, ԱՊՀ:

5 տարվա ընթացքում մրցանակաբաշխության հյուրերն ու նոմինանտներն են եղել Հայաստանի, Ռուսաստանի, աշխարհի այլ երկրների մշակույթի, արվեստի ու շոու-բիզնեսի հայտնի գարծիչները, այդ թվում Շերը, Ջիվան Գասպարյանը, Թաթա Միմոնյանը, Իոսիֆ Կոբզոնը, Իգոր Կրուտոյը, Իրինա Ալեգրովան, Լիզ Միտչելը, Դեմիս Ռուսսոն և այլոք:

Սպորտ



Ապրիլի 24-ին Ստամբուլում հայ ձյուդոիստները կպաշտպանեն իրենց երկրի պատիվը

2011-04-14

Այս հավաքը վերջինն էր ապրիլի 20-24-ը Թուրքիայի Ստամբուլ քաղաքում կայանալիք Եվրոպայի

մեծահասակների առաջնության նախապատրաստման համար:

Հավաքականի գլխավոր մարզիչ Ադրիան Կրոիտորուն հրապարակեց մասնակիցների անունները՝ Հովհաննես Դավթյան (60կգ, Գյումրի), Արմեն Նազարյան (66կգ, Հրազդան), Համբարձում Տոնոյան (66կգ, Գյումրի), Արտյոմ Բաղդասարյան (73կգ, Գյումրի), Հակոբ Առաքելյան (100կգ, Երևան), աղջիկներից՝ Գայանե Հարությունյան (48կգ, Երևան), հաղորդում է Հայաստանի Ձյուդոյի ֆեդերացիան:



Վիկ Դարչինյան. Ապրիլի 24-ին ողջ իմ թիմը հարգելու է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը
2011-04-14

Հայ բռնցքամարտիկն ասել է, որ այդ մենամարտում նա ցուցադրելու է պայքարի նոր ոճ և նոկաուտի է ենթարկելու Յոննի Պերեսին: «Չեմ կարող ասել, թե որ ռաունդում Պերեսը կհեռանա: Միայն գիտեմ, որ վաղ թե ուշ ես կոչնչացնեմ նրան: Կարծես թե նա իր կարիերայի ընթացքում ոչ մի անգամ չի հայտնվել ռինգի հատակին, բայց ես իմ շատ մրցակիցներին խորը նոկաուտի եմ ենթարկել: Եվ ես դա նորից կանեմ», - Դարչինյանի խոսքերը հաղորդում է fightnews.com-ը:

Դարչինյանը նշել է, որ հարգում է իր մրցակցին և անձնական ոչ մի բան չունի նրա դեմ, քանի որ կոլումբիացին լավ բռնցքամարտիկ է:

«Ապրիլի 24-ը կարևոր տեղ ունի իմ բոլոր հայրենակիցների կյանքում, դա Հայոց ցեղասպանության օրն է: Ես ուզում եմ, որպեսզի բոլորը դիտեն այդ մարտը և զգան, թե որքան հիմնավորված եմ ես գործելու: Իմ ողջ թիմն այդ օրը հարգելու է 1915-ի Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը», - ասել է Դարչինյանը:



ATP ապրիլյան վարկանիշում Դավիթ Նալբանդյանը շարունակում է 1585 միավորով զբաղեցնել 19-րդ տեղը
2011-04-11

Արգենտինահայ թենիսիստ Դավիթ Նալբանդյանը նախկինի նման 1585 միավորով շարունակում է

զբաղեցնել 19-րդ տեղը:

Առաջատարների եռյակը չի փոխվել. առաջին տեղում Ռաֆայել Նադալն է (Իսպանիա), երկրորդ տեղում՝ Նովակ Ջոկովիչը (Սերբիա), 3-րդ տեղում՝ Ռոժե Ֆեդերերը (Շվեյցարիա):

Դավիթ Նալբանդյանը մարտի 11-ին տարել է աճուկային ճողվածքի վիրահատություն և այդ պատճառով բաց թողել մի քանի մրցաշար: Թենիսիստի

բժշկի խոսքերով, եթե նա հասցնի ժամանակին առողջանալ, ապա կորստ կվերադառնա մայիսի 1-ին և հանդես կգա Մադրիդի, այնուհետև Հռոմի մաստերսներում:



Հայտարարություններ

«Հայաստանի հայկական գործում ունեցած նշանակալի ավանդի համար» համահայկական ամենամյա մրցանակաբաշխություն

2011-04-14

«Մայրենիի լավագույն ուսուցիչ» մրցույթը

կազմակերպվում է՝ նկատի ունենալով Սփյուռքում հայեցի կրթության և դաստիարակության, ուժացման դեմ պայքարում ինքնությանն ու հայ ոգուն հավատարիմ հայ սերունդներ դաստիարակելու, 21-րդ դարի մարտահրավերների պայմաններում հայ երեխային հայ պահելու նվիրական գործում մայրենի լեզվի ուսուցչի առաքելությունը: Այն նպատակ ունի խրախուսել Սփյուռքում հայ ազգային ինքնության, մայրենի լեզվի պահպանման, զարգացման և տարածման, հայ սերնդի հայեցի կրթության և դաստիարակության գործում նշանակալի ավանդ ունեցող ուսուցիչներին, ներկայացնել և տարածել նրանց մանկավարժական և մասնագիտական առաջավոր փորձը Սփյուռքում, նպաստել սփյուռքահայության մեջ հայերենի ուսուցիչ-մանկավարժի հեղինակության բարձրացմանը:

«Մայրենիի լավագույն ուսուցիչ» մրցույթին կարող են մասնակցել Սփյուռքում գործող հայկական ամենօրյա և մեկօրյա կրթօջախների մայրենի լեզվի այն ուսուցիչները, որոնք

- աշխատում են տվյալ երկրի օրենսդրությանը համապատասխան գործող դպրոցում, (ամենօրյա, մեկօրյա) կամ տեղի հայկական կազմակերպությանը, եկեղեցական կառույցին կից մասնագիտացված կրթական հաստատությունում,
- ունեն առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ՝ որպես հայոց լեզվի ուսուցիչ: Մրցույթին մասնակցել ցանկացող ուսուցիչները լրացված հայտադիմումները պետք է ներկայացնեն ՀՀ սփյուռքի նախարարություն մինչև ս. թ. հուլիսի 15-ը: Հայտադիմումին կից անհրաժեշտ է ներկայացնել նաև
- լուսանկար,
- կրթության մասին փաստաթուղթ (պատճենը),
- բնութագիր-երաշխավորագիր տվյալ դպրոցի, կառույցի կամ համայնքի կողմից: Մրցույթի արդյունքները կամփոփվեն 2011թ. սեպտեմբեր ամսին:

«Լավագույն երիտասարդական կազմակերպություն» մրցույթը կանցկացվի սփյուռքյան երիտասարդական կազմակերպությունների միջև:

Հասարակության շարժիչ ուժը երիտասարդներն են: Սփյուռքում գործող

երիտասարդական կազմակերպություններն իրենց մասնակցությունն են ունենում երիտասարդությանն առնչվող կրթական, գիտական, մշակութային, տնտեսական, մարզական, քաղաքական հարցերին, կազմակերպում են քննարկումներ, համազգային նշանակության խնդիրների նկատմամբ միասնականություն են դրսևորում և փորձում են իրենց ներդրումն ունենալ տարբեր համահայկական ծրագրերի և միջոցառումների իրականացման գործում: Յուրաքանչյուր երիտասարդական կազմակերպություն ունի իր գործելակերպն ու սկզբունքները, առաքելությունն ու պատասխանատվությունը: Մրցույթը նպատակ ունի ոգևորել և խրախուսել սփյուռքյան և համահայկական երիտասարդական կազմակերպություններին՝ կարևորելով նրանց դերակատարությունը համահայկական և միջազգային խնդիրների լուծման գործում:

«Լավագույն երիտասարդական կազմակերպություն» մրցույթին կարող են մասնակցել Սփյուռքում գործող երիտասարդական կառույցները, որոնք -գրանցված են տվյալ երկրի օրենսդրությանը համապատասխան կամ գործում են տեղի հայկական համայնքին, մշակութային, եկեղեցական կամ այլ հայկական կառույցին կից,

- ունեն առնվազն 3 տարվա գործունեության փորձ:

Լրացված հայտադիմումների՝ ՀՀ սփյուռքի նախարարություն ներկայացման վերջնաժամկետը հուլիսի 20-ն է:

Մրցույթի արդյունքները կամփոփվեն 2011թ. սեպտեմբեր ամսին:

«Կտոր մը Հայրենիք» երիտասարդական հայագիտական հետազոտությունների մրցանակաբաշխությունը նվիրված է Հայաստանի անկախության 20-ամյակին: Բոլոր ժամանակներում հայ ստեղծագործ ու ճկուն մտքի շնորհիվ է հնարավոր եղել հայ ժողովրդի դիմակայումը ճակատագրի փորձություններին:

Երիտասարդությունը, կայանալով այդ փորձությունների մասին գիտելիքներ ստանալով և նոր ժամանակներում նույն այդ փորձությունների ականատեսը լինելով, ձևավորում է իր աշխարհատեսությունն ու արժեքային համակարգը:

Յուրաքանչյուրն ունի Հայրենիքի իր ընկալումը, և այս հետազոտությունները հրաշալի հնարավորություն են ընձեռում ճանաչելու այն՝ երիտասարդության աչքերով:

Մրցանակաբաշխության նպատակն է վերհանել հայ երիտասարդի մտահոգությունները, Հայրենիքի ամրապնդմանն ու հզորացմանն ուղղված քայլերի կանխատեսումը, ևս մեկ անգամ հաստատել նրանց կարևորագույն դերակատարությունը հայոց պետականության զարգացման գործում:

«Կտոր մը Հայրենիք» երիտասարդական հայագիտական հետազոտությունների մրցույթին կարող են մասնակցել ուսանողներ, ասպիրանտներ և մինչև 35 տարեկան երիտասարդ գիտնականներ Հայաստանից և Սփյուռքից:

Մասնակցության համար լրացված հայտադիմումը և գիտական հետազոտությունը/աշխատանքը (հայերեն, մինչև 10 էջ ծավալով) պետք է ներկայացնել ՀՀ սփյուռքի նախարարություն մինչև ս. թ. սեպտեմբերի 5-ը: Հայագիտական հետազոտության հետ անհրաժեշտ է ներկայացնել նաև ուսումնական հաստատության կամ գիտական կազմակերպության գրավոր կարծիքը հայտատուի գիտական աշխատանքի վերաբերյալ: Յուրաքանչյուր անվանակարգի համար ՀՀ սփյուռքի նախարարության և Համաշխարհային հայկական կոնգրեսի կողմից ձևավորվում են մասնագիտական մրցութային հանձնաժողովներ, որոնք մշակում են հայտադիմումները, գնահատման չափանիշները, ինչպես նաև որոշում են մրցանակակիրներին: Բոլոր անվանակարգերում մրցանակակիրներից կպահանջվեն նաև բանկի տվյալներ (անվանում, հասցե, SWIFT, հաշվեհամար), ինչպես նաև անհրաժեշտ լրացուցիչ տեղեկատվություն:

«Հայապահպանության գործում ունեցած նշանակալի ավանդի համար» համահայկական ամենամյա մրցանակաբաշխության 2011թ. հայտարարությունը, հայտադիմումները, հետագայում՝ մրցութային հանձնաժողովների աշխատանքների, մրցույթների արդյունքների մասին տեղեկատվությունը ՀՀ սփյուռքի նախարարության և Համաշխարհային հայկական կոնգրեսի կայքէջերում՝ www.mindiaspora.am, www.armcongress.am, նախարարության «Հայերն այսօր» էլեկտրոնային թերթում:

Համահայկական ծրագրերի վարչություն
+374-10-585601(03)-117,
allarmenian@mindiaspora.am



**ՄՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԱՄՍՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ**

2011-04-14